



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ  
Խորհրդի 12.08.2016 թվականի թիվ 71 որոշմամբ

## ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(Ակտիվի դաս՝ Հրապարակային)



**ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Ուղևորության ընդհատումից ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), այլ իրավական ակտերի (միասին այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն):
- 1.2. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0006 (0009) լիցենզիայի հիման վրա իրականացնում է «Ֆինանսական վնասների ապահովագրություն» դասի ապահովագրություն՝ սույն Պայմանների հիման վրա կնքելով Ուղևորության ընդհատումից ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր:

**ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 2.1. **Ապահովագրող՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ.**
- 2.2. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր կնքած անձ.
- 2.3. **Ապահովագրված անձ՝** Ապահովադրի կողմից Պայմանագրում նշված անձ, ում հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա: Ապահովագրված անձը հանդիսանում է շահառու, ով իրավունք ունի ստանալ ապահովագրական հատուցում.
- 2.4. **Պայմանագիր՝** սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագիր կամ վկայագիր.
- 2.5. **Ապահովագրության փաթեթ՝** սույն Պայմաններով սահմանված, Ապահովագրողի կողմից առաջարկված, Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ընտրված և Պայմանագրով ամրագրված Ուղևորության ընդհատումից ապահովագրության փաթեթներից որևիցե մեկը.
  - 2.5.1. **Ուղևորության ընդհատումից ապահովագրության «ՍՏԱՆԴԱՐՏ» փաթեթ,** որի շրջանակներում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա են Ապահովադրին (Ապահովագրված անձին) և (կամ) վերջինիս ընտանիքի անդամին առնչվող՝ Պայմանների 4.1 կետում նշված իրադարձություններով պայմանավորված ավիատոմսի չեղարկման, թռիչքի ժամկետների փոփոխման կամ թռիչքի ընդհատման հետևանքով առաջացած ծախսերը,
  - 2.5.2. **Ուղևորության ընդհատումից ապահովագրության «ԿՈՍՊԼԵՔՍ» փաթեթ,** որի շրջանակներում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա են Ապահովադրին (Ապահովագրված անձին) և (կամ) վերջինիս ընտանիքի անդամին առնչվող՝ Պայմանների 4.1 կետում նշված իրադարձություններով պայմանավորված ավիատոմսի և (կամ) կացարանի ամրագրման չեղարկման, թռիչքի և (կամ) կացարանի ամրագրման ժամկետների փոփոխման կամ թռիչքի ընդհատման հետևանքով առաջացած ծախսերը,
- 2.6. **Ապահովագրական գումար՝** Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ.
- 2.7. **Ապահովագրական սակագին՝** Ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ տոկոսային արտահայտությամբ.
- 2.8. **Ապահովագրավճար՝** Պայմանագրով սահմանված չափով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար.
- 2.9. **Չհատուցվող գումար (ֆրանշիզա)՝** Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը, որը սահմանվում է Պայմանագրով կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար.
  - 2.9.1. Պայմանագրում պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասի չափը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել Ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
  - 2.9.2. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է Պայմանագրով սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի և կորստի չափից:



- 2.10. **Ապահովագրության տարածք**՝ Պայմանագրում նշված տարածք, որտեղ տեղի ունեցած դեպքը կարող է դիտարկվել որպես ապահովագրական պատահար: Սույն Պայմաններով ապահովագրության տարածք է հանդիսանում ամբողջ աշխարհը.
- 2.11. **Ապահովագրական պատահար**՝ Պայմանագրի գործողության ընթացքում Պայմանագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալը կրում է հավանական, անապասելի և (կամ) պատահական բնույթ և որի տեղի ունենալու պարագայում Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին (Ապահովագրված անձին) վճարել ապահովագրական հատուցում.
- 2.12. **Ուղևորություն**՝ ամրագրված (վճարված) ավիատոմս, որի առնվազն մեկ ուղղությունը Հայաստանի Հանրապետությունն է, և (կամ) ամրագրված (վճարված) կացարան.
- 2.13. **Բժշկական հաստատություն կամ Բժիշկ**՝ բժշկական ծառայություններ մատուցող համապատասխան իրավասու մարմնի կողմից լիցենզավորված ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

**ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ**

3.1. Սույն ապահովագրության շրջանակներում ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը՝ կապված Ապահովադրին (Ապահովագրված անձին) և (կամ) վերջինիս ընտանիքի անդամին առնչվող՝ Պայմանների 4.1 կետում նշված իրադարձություններով պայմանավորված ուղևորության չեղարկման, ժամկետների փոփոխման կամ ուղևորության ընդհատման հետևանքով առաջացած ծախսերի հետ:

**ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՌԻՍԿԵՐ)**

- 4.1. Համաձայն սույն Պայմանների՝ Ապահովագրական պատահար է համարվում ուղևորության չեղարկման, ժամկետների փոփոխման կամ ուղևորության ընդհատման հետ կապված ծախսերի առաջացումը, որը հետևանք է հետևյալ իրադարձությունների ի հայտ գալու՝
  - 4.1.1. Ապահովագրված անձի և (կամ) նրա ընտանիքի անդամի (կին (ամուսին), զավակ (որդեգրած զավակ), ծնող, տատ, պապ, ծնողներից առնվազն մեկից սերված քույր և (կամ) եղբայր, ծնողներից առնվազն մեկից սերված քրոջ (եղբոր) կին (ամուսին) և զավակ (որդեգրած զավակ), օրինական խնամակալ) ստացիոնար բուժման անհրաժեշտության (հոսպիտալացման), առողջության հետ կապված անհետաձգելի խնդիրների առաջացման, մահվան,
  - 4.1.2. Ապահովագրված անձին պատկանող անշարժ գույքի և (կամ) տրանսպորտային միջոցի վնասման (ոչնչացման) կամ կորստի, որը տեղի է ունեցել՝
    - 4.1.2.1. հրդեհի հետևանքով,
    - 4.1.2.2. ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման համակարգերի ջրերի արտահոսքի հետևանքով,
    - 4.1.2.3. երրորդ անձանց կողմից, պայմանով, որ պատճառի հետաքննությունը և հետևանքների վերացումը կատարվել են Պայմանագրի գործողության ընթացքում,
    - 4.1.2.4. տարերային աղետների (երկրաշարժ, սողանք, կարկուտ, ջրհեղեղ կամ տեղատարափ անձրև, փոթորիկ կամ ուժեղ քամի) հետևանքով:
  - 4.1.3. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի՝ դատական գործընթացում ներգրավված լինելու (որպես վկա, փորձագետ, մասնագետ, թարգմանիչ) մասին ծանուցում ստանալու, եթե դատական գործընթացի անցկացման ժամկետը սահմանված է ուղևորության ժամկետի ընթացքում կամ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձին արգելված է լքել երկիրը,
  - 4.1.4. Ապահովագրված անձի՝ զինված ուժեր զորակոչվելու (գորավարժությունների մասնակցելու), եթե Ապահովագրված անձն այդ մասին ծանուցումը ստացել է Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո:

**ԲԱԺԻՆ 5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 5.1. Սույն ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա չեն ծախսերը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով հետևանք են՝
  - 5.1.1. Ապահովագրված անձի, նրա ընտանիքի անդամի ալկոհոլի, թմրանյութերի, թունավոր, հոգեմետ նյութերի օգտագործման,



- 5.1.2. Ապահովագրված անձի, նրա ընտանիքի անդամի ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի,
  - 5.1.3. Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի կողմից դիտավորյալ կանխամտածված կամ հակաօրինական գործողությունների,
  - 5.1.4. Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի կողմից Ուղևորության ընթացքում դեղամիջոցների օգտագործումը չարաշահելու, Բժշկի կողմից նշանակված բուժումը չպահպանելու, բացառությամբ, եթե Ապահովագրված անձը կամ նրա ընտանիքի անդամը ապացուցում է, որ բուժումը չպահպանելը եղել է իրենից անկախ հանգամանքներով պայմանավորված,
  - 5.1.5. Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի հոգեկան հիվանդությունների և շեղումների,
  - 5.1.6. Պայմանագրի կնքման պահին Ապահովագրված անձի՝ որևէ ռազմական ուժերում կամ կազմավորումներում ծառայության,
  - 5.1.7. Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի կողմից սպորտային պարապմունքների, մրցումների մասնակցելու, առանց շարժիչի թռչող սարքերով, ճախրասավառնակով (планер), պարաշյուտով թռիչքի, ցանկացած տեսակի սպորտով կամ այլ վտանգավոր գործողություններով զբաղվելու,
  - 5.1.8. հղիության կամ դրա հետ կապված առողջական ցանկացած խնդրի,
  - 5.1.9. ատամնաբուժական խնդիրների,
  - 5.1.10. Ապահովագրված անձի ճանապարհորդական փաստաթղթերի սխալ գրանցման, գողության կամ կորուսի:
- 5.2. Ապահովագրողը հատուցում չի իրականացնում այն պատահարների համար, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով հետևանք են՝
- 5.2.1. միջուկային պայթյունի, ճառագայթման ազդեցության, ռադիոակտիվ կամ այլ տեսակի վարակի,
  - 5.2.2. տարերային աղետների և դրանց հետևանքների, համաճարակների, կարանտինի, օդերևութաբանական պայմանների, բառացությամբ Պայմանների 4.1.2.4 ենթակետով սահմանված դեպքի,
  - 5.2.3. պատերազմների, զորաշարժերի կամ ռազմական այլ գործողությունների, քաղաքական հուզումների, սահաբեկչական գործողությունների, զանգվածային ակցիաների, գործադուլների:
- 5.3. Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում հյուպատոսարանների, տուրիստական ընկերությունների, տրանսպորտային կազմակերպությունների, Ապահովագրված անձի և ուղևորության կազմակերպման և անցկացման հետ առնչություն ունեցող այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած սխալների, ինչպես նաև վիզայի մերժման համար:

**ԲԱԺԻՆ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ**

- 6.1. Ապահովագրական գումարը սահմանվում է առավելագույնը ավիատոմսի չվերադարձվող արժեքի և (կամ) կացարանի ամրագրման չվերադարձվող արժեքի չափով՝ Պայմանագրի գործողության ողջ ժամկետի համար:
- 6.2. Ապահովագրության պայմանագրով Ապահովադրի (Ապահովագրված անձի) ցանկությամբ կարող է սահմանվել չհատուցվող գումար:

**ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

- 7.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի գործողության ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված Ապահովագրության փաթեթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից:
- 7.2. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից վճարվում է միանվագ, կանխիկ կամ փոխանցումով՝ Պայմանագրի կնքման պահին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 7.3. Եթե Ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական Ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված Ապահովագրավճարի չափը:



**ՌԻԴԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 7.4. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 3-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 7.5. Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼ ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ Ապահովագրական ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՀԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ Ապահովագրավճարի գծով Ապահովագրողի նկատմամբ ՈՒՆԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Սույն կետով սահմանված Ապահովագրողի իրավունքը գործում է մինչև Ապահովադրի կողմից Ապահովագրավճարի գծով ունեցած պարտավորության մարման օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 00:00-ն:

**ԲԱԺԻՆ 8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏՆԵՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ**

- 8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովադրին (Ապահովագրված անձին) տրամադրել ապահովագրական հատուցում:
- 8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:
- 8.3. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել.
  - 8.3.1. ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները,
  - 8.3.2. Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը,
  - 8.3.3. ուղևորության վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝ ավիատոմսի բնօրինակը կամ պատճենը, կացարանի ամրագրումը, ավիատոմսը և (կամ) կացարանի ամրագրումը չեղարկելու դեպքում չվերադարձվող գումարի չափը հավաստող փաստաթուղթը,
  - 8.3.4. իրեն տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասների չափերի կանխորոշման վրա,
  - 8.3.5. այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:
- 8.4. Պայմանագիրը կնքվում է ավիատոմսի գնման և (կամ) կացարանի ամրագրման օրը, որը չի կարող լինել ավելի ուշ, քան նախատեսվող թռիչքից 1 (մեկ) շաբաթ առաջ:
- 8.5. Ուղևորության յուրաքանչյուր թռիչքի (ուղղության) համար կնքվում է 1 (մեկ) ապահովագրության պայմանագիր:
- 8.6. Պայմանագրի գործողության ժամկետը սկսվում է ավիատոմսի գնման և (կամ) կացարանի ամրագրման օրերից ամենաուշին հաջորդող օրվա ժամը 00:00-ից և ավարտվում մինչև յուրաքանչյուր թռիչքի (ընդհատումներով թռիչքի դեպքում՝ դրա վերջին մասի) մեկնման ժամը, և չի կարող գերազանցել 365 օրը:
- 8.7. Պայմանագիրը վաղաժամկետ դադարում է.
  - 8.7.1. եթե վերացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու հավանականությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է Ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով,
  - 8.7.2. Կողմերի փոխհամաձայնեցմամբ,
  - 8.7.3. եթե Ապահովագրողի կողմից կատարվել են Պայմանագրով նախատեսված բոլոր պարտավորությունները,
  - 8.7.4. ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:
- 8.8. Մինչև Պայմանագրի ուժի մեջ մտնելն Ապահովադրի կողմից Պայմանագրից հրաժարվելու դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ ենթակա են վերադարձման:
- 8.9. Պայմանագրի գործողության մեջ մտնելուց հետո Ապահովադրի կողմից Պայմանագրից հրաժարվելու դեպքում Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:



- 8.10. Պայմանագրի գործողության ընթացքում երրորդ անձանց կողմից Ապահովադրի (Ապահովագրված անձի) նկատմամբ ցանկացած անօրինական գործողության, այդ թվում՝ խարդախության կամ խարդախության փորձի, վերջինիս Ուղևորության վերաբերյալ խեղաթյուրված, ոչ ճիշտ և (կամ) լիարժեք, ցանկացած տեսակի սխալ տեղեկատվության ներկայացման դեպքում Պայմանագիրն Ապահովագրողի կողմից ճանաչվում է առոչինչ, և այդ Պայմանագրով Ապահովագրողին վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ ենթակա են վերադարձման: Իսկ Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո հայտնաբերված համանման դեպքերում՝ Պայմանագրի գծով Ապահովագրողին ներկայացված ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումը ենթակա է մերժման և Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում տրամադրելու պարտականությունից, իսկ Ապահովագրողին վճարված ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն:
- 8.11. Սույն Պայմանները կցվում են Պայմանագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը, և պարտադիր են Կողմերի համար:
- 8.12. Պայմանագրի և սույն Պայմանների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Պայմանագիրը, իսկ սույն Պայմանների և նրա թարգմանությունների տարբերությունների դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

**ԲԱԺԻՆ 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 9.1. Ապահովադիրը և (կամ) Ապահովագրված անձն իրավունք ունի՝*
- 9.1.1. Ապահովագրողից պահանջել պետական գրանցումը և գործունեության թույլտվությունը հավաստող փաստաթղթերը (պետական գրանցման վկայական, լիցենզիա),
  - 9.1.2. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքերի կամ գործակալի) միջոցով,
  - 9.1.3. Պայմանագրով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում,
  - 9.1.4. Պայմանագիրը կորցնելու դեպքում գրավոր դիմումի հիման վրա ստանալ դրա կրկնօրինակը,
  - 9.1.5. Պայմաններով սահմանված կարգով վաղաժամկետ լուծել Պայմանագիրը:
- 9.2. Ապահովադիրը և (կամ) Ապահովագրված անձը պարտավոր է՝*
- 9.2.1. Ապահովագրողին ՀԱՂՈՐԴԵԼ ապահովագրական ՌԻՄԿԻ ԱՍՏԻՃԱՆԸ ՈՐՈՇՈՂ հավաստի և ճշգրիտ իրեն հայտնի ԲՈԼՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
  - 9.2.2. Ապահովագրողին ՀԱՅՏՆԵԼ նույն ռիսկերն այլ ապահովագրության պայմանագրերով/վկայագրերով ապահովագրված լինելու մասին,
  - 9.2.3. Պայմանագրով սահմանված ԿԱՐԳՈՎ և ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐԵԼ Ապահովագրավճարը,
  - 9.2.4. Պատահար տեղի ունենալու դեպքում ԱՆՀԱՊԱՂ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼ Ապահովագրողին,
  - 9.2.5. Ապահովագրական ՊԱՏԱՀԱՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ վնասի մեծացման չափը կանխելու նպատակով,
  - 9.2.6. ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ Ապահովագրված անձին,
  - 9.2.7. Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողին ԱՆՀԱՊԱՂ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ այնպիսի հանգամանքների մասին, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են ազդել ապահովագրական ռիսկի գնահատման վրա,
  - 9.2.8. ԱՊԱՀՈՎԵԼ Ապահովագրողին իրեն հայտնի այն ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՄԲ, որն անհրաժեշտ է Ապահովագրական պատահարի հետ կապված հանգամանքները պարզելու համար, ինչպես նաև չխոչընդոտել վերջիններիս՝ նման տեղեկություններ ձեռք բերելու և դրանց ծանոթանալու գործընթացին:
- 9.3. Ապահովագրողն իրավունք ունի՝*
- 9.3.1. ստուգել Ապահովադրի կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև հետևել և պահանջել Ապահովադրի կողմից Պայմանագրի պահանջների և պայմանների կատարումը,
  - 9.3.2. Պայմանագիր կնքելուց առաջ պահանջել համապատասխան փաստաթղթեր,
  - 9.3.3. Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի (բրոքերի կամ գործակալի) միջոցով,
  - 9.3.4. հետաքննել Ապահովագրական պատահարի հանգամանքները,





- 9.3.5. իրավասու պետական մարմիններից կամ պատահարի առաջացման հանգամանքներին ծանոթ այլ անձանցից ինքնուրույն պարզել պատահարի առաջացման պատճառները և հանգամանքները, ինչպես նաև հավաքագրել Ապահովագրական պատահարի հետ կապված տվյալներ,
  - 9.3.6. ապահովագրական հատուցման կամ մասնակի հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու համար կասեցնել կամ երկարաձգել ապահովագրական հատուցման գործընթացը, եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց պատճառով Ապահովագրողն անհրաժեշտ է համարում ստանալ հավելյալ տեղեկություն Ապահովագրական պատահարի վերաբերյալ դրա մասին գրավոր ծանուցելով Ապահովադրին (Ապահովագրված անձին),
  - 9.3.7. ապահովագրական հատուցման ենթակա գումարը վճարելիս այն հաշվանցել Պայմանագրի գծով կետանցված Ապահովագրավճարի հետ,
  - 9.3.8. մերժել ապահովագրական հատուցման իրականացումը, եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել սույն Պայմաններով սահմանված իր պարտավորությունները,
  - 9.3.9. մերժել ապահովագրական հատուցման վճարումը ՀՀ օրենսդրությամբ, Պայմանագրով կամ Պայմաններով սահմանված կարգով:
- 9.4. Ապահովագրողը պարտավոր է՝**
- 9.4.1. Ապահովադրի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,
  - 9.4.2. Ապահովադրին ծանոթացնել Պայմանների հետ և տրամադրել դրա օրինակը,
  - 9.4.3. Ապահովադրին տրամադրել Պայմանագրի օրինակը,
  - 9.4.4. Պայմանագրով և Պայմաններով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետում իրականացնել ապահովագրական հատուցում:
- 9.5. Կողմերը և Ապահովագրված անձը պարտավոր են չհրապարակել, չբացահայտել և (կամ) երրորդ անձին չտրամադրել իրենց հայտնի դարձած բժշկական, ֆինանսական և ապահովագրական գաղտնիք հանդիսացող և (կամ) պարունակող ցանկացած տեսակի տեղեկություն՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, և իրենց հայտնի դարձած տեղեկությունը չօգտագործել ի օգուտ սեփական և (կամ) երրորդ անձանց շահերին, ինչպես նաև միմյանց տնտեսական դիրքին վնաս հասցնելու համար:
- 9.6. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ու Ապահովագրողն ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված նաև այլ իրավունքներ ու պարտականություններ:

**ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ**

- 10.1. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը և (կամ) Ապահովագրված անձը ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ.
- 10.1.1. պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) Պայմանագրում նշված հեռախոսահամարով տեղյակ պահել Ապահովագրողին, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո (պատահարը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս տեղի ունենալու դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո) ՈԶ ՈՒՇ, ՔԱՆ 10 (ՏԱՍԸ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ այդ մասին գրավոր տեղեկացնել Ապահովագրողին: Սույն ենթակետի առաջին մասով նախատեսված պարտականությունը չկատարելու դեպքում Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼՈՒ ապահովագրական հատուցում, եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: Սահմանված ժամկետում Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ՉՏԵՂԵԿԱՅՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼ ապահովագրական հատուցում՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը կամ Ապահովագրված անձը ապացուցում են տեղեկացնելու անհնարիությունը: Պայմանների սույն կետը չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարել ապահովագրական հատուցում:



- 10.1.2. Պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) հայտնել տուրիստական կազմակերպությանը, ավիաընկերությանը, իսկ կացարանը ինքնուրույն ամրագրելու դեպքում՝ կացարանի կոնտակտային անձին,
- 10.1.3. ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԲՈԼՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ամրագրման չեղարկման ժամկետների պահպանում և այլն) ավիատոմսի և (կամ) կացարանի ամրագրման չեղարկման հետ կապված ծախսերը նվազագույնի հասցնելու համար,
- 10.1.4. Պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) հայտնել համապատասխան իրավասու մարմիններին և ստանալ Պատահարը տեղի ունենալու հանգամանքը հավաստող պատշաճ վավերացված և Պատահարի հետ կապված այլ փաստաթղթեր,
- 10.1.5. Ապահովագրական պատահարի առաջացման համար երրորդ կողմից պատճառված ՎՆԱՄԻ (մի մասը կամ ամբողջությամբ) ՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ Ապահովագրողին, որի դեպքում Ապահովագրողին է վերադարձվում համապատասխան չափով վճարված ապահովագրական հատուցումը, իսկ հատուցումը վճարված չլինելու դեպքում այդքան մասով վճարում չի կատարվում,
- 10.1.6. Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ԱՊԱՀՈՎԵԼ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ և ՇԱՀԵՐԻ ՊԱՇՇԱՃ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ:
- 10.2. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը պարտավոր է.
  - 10.2.1. տրամադրել խորհրդատվություն Ապահովադրի (Ապահովագրված անձի) հետագա իրականացվելիք գործողությունների վերաբերյալ,
  - 10.2.2. Ապահովադրից և (կամ) Ապահովագրված անձից ապահովագրական հատուցման դիմում ստանալուց հետո վերջինիս տեղեկացնել բացակայող և ապահովագրական պահանջի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին,
  - 10.2.3. իրականացնել ապահովագրական հատուցում Պայմաններով սահմանված կարգով և ժամկետում:

**ԲԱԺԻՆ 11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

- 11.1. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին պետք է ներկայացվեն հետևյալ փաստաթղթերը՝
  - 11.1.1. Ապահովադրի և (կամ) Ապահովագրված անձի կողմից դիմում՝ հատուցում ստանալու վերաբերյալ,
  - 11.1.2. Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),
  - 11.1.3. Ապահովադրի և (կամ) Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթուղթը,
  - 11.1.4. Ապահովագրական պատահարը հիմնավորող իրավասու մարմինների կողմից տրված և պատշաճ հաստատված փաստաթղթերը, մասնավորապես՝
    - 11.1.4.1. տուրիստական ընկերության հետ կնքված Պայմանագրի բնօրինակը,
    - 11.1.4.2. տուրիստական Ընկերության ծառայությունների դիմաց կատարված վճարումները հաստատող փաստաթուղթ,
    - 11.1.4.3. ավիատոմսի և (կամ) կացարանի համար կատարված վճարումները և (կամ) ամրագրումը հաստատող փաստաթուղթ,
    - 11.1.4.4. տուրիստական ընկերության կողմից տրվող պայմանները ներառող փաստաթուղթ, այդ թվում՝ ավիատոմսի և (կամ) կացարանի ամրագրման արժեքը գնման/ամրագրման օրվա դրությամբ ՀՀ դրամով, չեղարկման դեպքում վերադարձվող և չվերադարձվող գումարների չափը,
    - 11.1.4.5. չօտագործված ավիատոմսը և (կամ) կացարանի ամրագրման փաստաթուղթը,
  - 11.1.5. Ապահովագրական պատահարի հանգեցրած իրադարձությունները հիմնավորող իրավասու մարմինների կողմից տրված և պատշաճ հաստատված համապատասխան փաստաթղթերը, մասնավորապես՝
    - 11.1.5.1. Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի առողջական խնդիրների կամ մահվան դեպքում
      - Էպիկրիզը և (կամ) Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի հոսպիտալացումը հաստատող փաստաթուղթը և (կամ) մահվան վկայականը,





**ՌԻԴԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- Ապահովագրված անձի և նրա ընտանիքի անդամի ազգակցական կապը հաստատող փաստաթուղթը,
- 11.1.5.2. Ապահովագրված անձին պատկանող գույքի վնասման կամ կորստի դեպքում՝
  - գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ,
  - գույքի վնասման կամ կորստի (ոչնչացման) վերաբերյալ համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված անհրաժեշտ փաստաթղթերը, լուսանկարներ՝ բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողն անձամբ հնարավորություն ունի պարզելու պատահարի տեղի ունենալու հանգամանքները և Ապահովադրին (Ապահովագրված անձին) ազատել է նշված պարտականությունից,
  - դեպքի պահին Ապահովագրված անձի կամ ընտանիքի անդամի կողմից (եթե վերջինս հանդիսացել է Ապահովագրված անձին պատկանող տրանսպորտային միջոցի վարորդ) ավկոհով, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի օգտագործման հանգամանքը հաստատող կամ հերքող համապատասխան լիազորված մարմնի կողմից տրված փաստաթուղթ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրողի ներկայացուցիչը պարզել է տվյալ անձի կողմից ավկոհով, թմրադեղերի, տոքսիկ նյութերի կամ հոգեմետ դեղերի օգտագործման հանգամանքը կամ ազատել է տվյալ անձին սույն ենթակետում նշված պարտականությունը կատարելուց՝ վերջինիս տրամադրելով համապատասխան փաստաթուղթ,
- 11.1.5.3. Դատական գործընթացում ներգրավվածության դեպքում՝
  - դատարանի կողմից տրված համապատասխան ծանուցում,
- 11.1.5.4. Զինված ուժեր զորակոչվելու (զորավարժությունների մասնակցելու) դեպքում՝
  - իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան ծանուցում:
- 11.1.6. Ապահովագրողի պահանջով՝ Ապահովագրական պատահարի հանգամանքները պարզաբանող և (կամ) Ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշման կայացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր, տեղեկատվություն:
- 11.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ՊԱՐՏԱՎՈՐ Է ապահովագրական հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել Ապահովագրական պատահարի վերաբերյալ Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ 3 (ԵՐԵՔ) ԱՄՄՎԱ ԸՆԹԱՅՈՒՄ: Պայմանների սույն կետը չկատարելու դեպքում Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉՎՃԱՐԵԼ ապահովագրական հատուցում:
- 11.3. Ապահովագրողն Ապահովագրական պատահարին առնչվող և սույն Պայմաններով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հատուցում տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշում:
- 11.4. Ապահովագրողն Ապահովադրի (Ապահոցագրված անձի) պահանջով ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ եզրակացությունը (որոշումը) հաստատելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այն առձեռն կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադրին (Ապահովագրված անձին):
- 11.5. Ապահովագրական հատուցման մերժման դեպքում Ապահովագրողը կայացնում է պատճառաբանված որոշում, որը 5 (հինգ) օրվա ընթացքում պատվիրված նամակով ուղարկում է Ապահովադրին (Ապահովագրված անձին)՝ նրա մշտական բնակության կամ գործունեության հասցեով:
- 11.6. Ապահովադիրը պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած այլ գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է անմիջապես ներկայացնի Ապահովագրողին:
- 11.7. Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԵՐԺԵԼ ապահովագրական հատուցումը կամ հետ պահանջել այն, եթե պարզվի, որ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին ՏՐԱՄԱԴՐՎԵԼ ԵՆ ապահովագրական ՌԻՄԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ կեղծ տեղեկություններ կամ այն դեպքերում, երբ Ապահովագրված անձի և (կամ) Ապահովադրի կողմից ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ՄԻՏՈՒՄՆԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են Ապահովագրական պատահարի տեղի ունենալուն:



**ԲԱԺԻՆ 12. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԵՏ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)**

- 12.1. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (Ապահովագրված անձին) պատճառված վնասից բխող նրա պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով: Դիտավորյալ վնաս պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքն Ապահովագրողին անցնելը բացառող Պայմանագրի պայմանն առջինն է:
- 12.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, ինչպես նաև տրամադրել իրեն հայտնի բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին սուբրոգացիա իրականացնելու համար:
- 12.3. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ՀՐԱԺԱՐՎԵԼ Է Ապահովագրողի կողմից հատուցված կամ հատուցվելիք վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ ՊԱՀԱՆՁԻ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ կամ այդ իրավունքի իրականացումն ԱՆՀՆԱՐԻՆ Է ԴԱՐՁԵԼ Ապահովադրի (Ապահովագրված անձի) մեղքով, ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան չափով ԱԶԱՏՎՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ, իսկ ապահովագրական հատուցումն արդեն վճարված լինելու դեպքում՝ Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ապահովադրից (Ապահովագրված անձից) վերադարձնել ավելորդ վճարված ապահովագրական հատուցման գումարը:

**ԲԱԺԻՆ 13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ**

- 12.1. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացող բոլոր վեճերը լուծվում են Պայմանագրի կողմերի միջև անմիջական բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը կարող են լուծվել ՀՀ-ում գործող Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համաձայն:
- 12.2. Վեճերի առաջացման դեպքում Պայմաններով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: